

անուանուի Պոկտանիոյ Եպիսկոպոսը՝ Քի-
երեմովիչ։ Թորոսովիչ Հռոմ կը հասնի 30
Դեկտեմբեր 1668ին։ Ս. Ժողովը թէ՛ իրեն
թէ՛ Լէոպոլսոյ հայ Աւագանիին կ'առա-
ջարկէ անուանումը օգնական Եպիսկոպոսի
մը, եւ երկուքին կողմէն ալ մերժումի կը
բախի։ Հ. Լուի Բիտու, Թէադօրեան կրօ-
նաւորը, որ յաջորդած էր Հ. Կղեմէս Կա-
լանոսի ի զուր կը ջանայ տարհամոզել հայ
Աւագանին։ Իսկ Ս. Ժողովը կը ջանայ գո-
նէ Հռոմ կեցնել Թորոսովիչը, որ սակայն
1669 Յունիս 4ին կը փորձէ գաղտնի հեռա-
նալ Քաղաքէն։ Բայց Քաղաքապետարանի
ոստիկանները զինք կը բռնեն եւ Հռոմ կը
վերադարձնեն։ Թորոսովիչ Ս. Բրազսետի
վանքը եւ ապա Ս. Բարթողիմէոսի մենաս-
տանին մէջ կը մնայ մի քանի օր հսկողու-
թեան ներքեւ, սակայն վայելելով իր առ-
տիճանին յարմար հիւրասիրութիւնը։ Եւ
տեսնելով որ միշտ կը ձգձգուի իր վերա-
դարձը, կը ջանայ Հաւատոյ Տարածման
Ս. Ժողովին վրայ ճնշում բանեցնել Լէո-
պոլսոյ հայ Աւագանիին միջոցաւ, որ
այսուհանդերձ ոչ մէկ ըմբոստութիւն ցոյց
կու տայ ընդդէմ Ս. Աթոռին։ Այս բանիս
իրագեկ ըլլալով, Ս. Ժողովին քարտուղարը
Պալտեսգի, Օգոստոս 24ին կը գրէ Հ.
Բիտուի. «Ուրախ եմ որ Արքեպիսկոպոսին
նամակները սեւէ գէշ արդիւնք չեն տար,
ինչ որ պիտի ծառայէ Կարգինալներն աւելի
հաստատելու իրենց որոշողութեան մէջ՝
թոյլ չտալու անոր վերադարձը»։ Նոյն օրը